

2169

С.1930/1100

Հ Ս Խ Հ
Ա Ռ Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

ԲԺ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

Ք Ո Ւ Թ Ե Շ

ՍԵՆ-ԼՈՒՍ
ԿՐԵԿԱՐԵՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

№ 3

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ-1929

616.9
2-15

C. 1930/1186
30 JUL 2010

U
Ca 1655 6169
2-15

ՀԱՅԿ ԱՌԻՊՆԿՈՒԹՅԱՆ

№ 3 ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ № 3

ԲԺ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ՔՈՒԹԵՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
КОСМОСВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

7081

18.06.20



69551-68

Հրատ. № 1095

ՊԵՏՆԱԿԱՆ ԳԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ԳԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեպ. № 2813(բ) Տիրաժ 3.000 Գրատվ. 1089

ՔՈՒԹԵՇ

Միկրոբներ Վարակիչ կոչվում են այն հիվանդությունը, վորը հիվանդից կարող է փոխանցվել առողջին:

Վարակի հեղինակը միկրոբները կամ մանրեններն են, վորոնք սովորական աչքի համար մուռն են աննշմարելի, և միայն նրանց կարելի լի ատեսել միկրոսկոպի տակ:

Միկրոբները բն. լիջան մեջ շատաշատ են: Նրանք ջրված են ամեն տեղ և բազմանում են միլիոններով: Նրանց սիրած վայրերը աղտոտություններն ու ապականություններն են. դուք նրանց կհանդիպեք աղտոտ ջրի, ողի, հողի մեջ: Իրա համար ել մարդս դուրսությունը կարող է վարակվել անմաքուր ողից, ջրից ու հողից: Փոշին վարակի տարածման գլխավոր միջոցներից մեկն է:

Բոլոր մանրենները վնասատու չեն. կան այնպիսիները, վորոնք մեր առողջության համար վտանգ չեն ներկայացնում. իսկ վրամանք ել նույնիսկ ոգտակար են. «բինակ» ատանց թթխը-

մորի հաց չենք կարող ստանալ, իսկ թթխմոր ունենալու համար հարկավոր են վորոշ տեսակի մանրեններ՝ սոււնկեր (դրոժ). նուէնը կարող ենք ասել մածնի համար և այլն:

Մանրեններից շատերն ել մարդկության պատուհասներն են, մանավանդ անգրագետ ու անկուլտուրական ժողովուրդների համար, վորոնք քիչ ուշադրություն են դարձնում իրենց մարմնի, բնակարանների և շրջապատի մաքրության վրա: չգիտեն սիստեմատիկ ու տեւական պայքար վարել մանրենների դեմ:

Մանրեններից ամենից վտանգավորները, ամեն հասակի համար ել, խոլերայի, ժանտախտի, տուբերկուլյոզի, սիֆիլիսի, բժավոր, վորովայնի և անդրադարձ աիֆի բացիլներն են:

Միկրոբները տարբեր դիմացկունություն են ունենում: Նրանցից շատերն իրենց համար անբարենաշող պայմաններում, հատկապես լուսի և արևի ճառագայթների ազդեցությունից, շատ շուտ վոչնչանում են: Կան, ընդհակառակը, անպիսիները, վորոնք ավելի դիմացկուն են և իրենց վարակի ուժը պահպանում ե ամիսներ շարունակ: Վերջիններիս շարքին ե պատկանում նաև քութեշի մանրեն: Այսպես վոր այն բոլոր իրերը, վորոնք շփման մեջ են լեղել քութեշով հիվանդների հետ, կարող են ամիսներից

հետո ևս վարակի աղբյուր հանդիսանալ: Առանձնապես վտանգավոր են հիվանդների շորերը: Հիվանդի առողջանալուց շաբաթներ հետո նրա սենյակը ևս վարակի վորոշ վտանգ ե ներկայացնում: Իրա համար ել ախտահանությունը կարևոր դեր ե կատարում վարակիչ հիվանդությունների դեմ վարելիք պայքարում:

Յերբ ասում են, թե մարդս վարակվել ե վորևե հիվանդությամբ, դա նշանակում ե, թե վորևե ձեռով մանրեն մտել ե նրա որգանիզմի մեջ և առաջ բերել հիվանդություն: Վարակի պատճառը մանրեններն են:

Մի հիվանդության մանրե չի կարող միջանի հիվանդություն առաջացնել. որինակ՝ խոլերայի միկրոբը կարող ե միայն խոլերա հիվանդությունն առաջացնել, տուբերկուլյոզինը՝ տուբերկուլյոզ, սիֆիլիսինը՝ սիֆիլիս...

Մարդկության մահացությունների խոշորագույն մասն առաջանում ե վարակիչ հիվանդություններից:

Յերբ վարակիչ հիվանդությունը մասսայական ե դառնում և մեծ ել զոհեր տանում, ասում ենք, թե մենք գործ ունենք համաճարակի հետ:

Մանկական հասակի հիվանդություններից ծագիկը, դիֆտերիաը, կարմրուկը, կապույտ

հազը,—բոլորն ել վարակիչ հիվանդութիւններ են, վորոնք ժամանակ առ ժամանակ յերևում են մեզ մոտ համաճարակի ձևով և մեծ զոհեր տանում: Քուրբեցն ել այդ հիվանդութիւնների շարքին ե պատկանում: Վերջին յերկու-չերեք տարիներում Միութենական յերկրներում նա մեծ զոհեր տարավ:

1928 թվին քութեշի համաճարակը մեր յերկրում մասսայական բնույթ ստացավ, և մեծ ել զոհեր յեղան: Չնայած մեր կառավարութեան ձեռք առած կտրուկ միջոցներին, քութեշը միանգամայն արմատախիլ չեղավ, և վտանգ կա առաջիկա ձմռան ամիսներին, նոր բռնկման:

Քութեշը մանուկ հասակի հիվանդութիւններէն է: Քութեշը վարակիչ հիվանդութիւնն է և ամենից վտանգավորն է:

Նա չափազանց վարակիչ ե և համաճարակների ժամանակ մեծ զոհեր ե տանում, քանի վոր ծանր բարդութիւններ ե տալիս, և նույնիսկ վորոշ դեպքերում դժվար ե նրա դեմ պայքարել:

Քութեշի թույնը չափազանց դիմացկուն ե և նա պահպանում ե իր վարակի ուժը ամիսներ շարունակ: Քութեշով հիվանդի թուքը, խորխը, լորձունքը, արցունքը, մեզը, արյունը և բոլոր հոսումները քթից, բերանից, ականջից—ամեն

ել մեծապես վարակիչ են: Իրա համար ել բոլոր հնարավոր միջոցները պիտի գործադրել՝ անմիջապես մեկուսացնելու հիվանդներին և խնամքով ախտահանման յենթարկելու այն բոլոր իրերը, վորոնք հիվանդի գործածութեան առարկա յեն յիղել:

Մեծ քաղաքներում քութեշ հիվանդութիւնը համարյա միշտ ել գոյութիւն ունի և այն տեղերից ել տարածվում ե գավառներն ու գյուղերը:

Յե՞րբ ե տարածվում է քութեշը

Քութեշը զարգանում ու տարածվում ե ցուրտ յենականներին, գլխավորապես աշունքն ու ձմեռվա ամիսներին: Գարնանը նրա թափը կտրվում ե, իսկ ամառ ժամանակ համարյա թե չքանում:

Իրտողութիւնները ցույց են տալիս, վոր քութեշի համաճարակը մտավորապես 10 տարին մեկ կանոնավորապես կրկնվում ե: Քութեշի վերջին համաճարակը Մոսկվայում տեղի յե ունեցել 1916 թվին, ապանաբռնկել ե 1923 թվին և մեկ ել 1929-ին, իսկ Հայաստանում՝ 1905—7, 1915—17 և 1927—29 թվերին:

Ռուսաստանում, համապատասխանաբար

Ռուսաստանում, համապատասխանաբար ճարակի ժամանակ, քութեշը մեծ զոհեր ե պատճառում. 1905 թվին քութեշից մեռել են 200 հազար յերեխա:

Տարբեր յերկրներում քութեշը տարբեր ավերածութիւններն ե անում: Մինչդեռ Ռուսաստանում 1905 թվին հարյուր հազար բնակչութիւնից մեռել են 176 հոգի, Գերմանիայում մեռել են 14, իսկ Ֆրանսիայում 2 հոգի:

Այս փաստը մի ավելորդ անգամ ցույց ե տալիս, վոր կուլտուրայես բարձր ժողովուրդների մեջ, ուր առողջապահական զիտելիքները բարձր են, մահացութիւններն ել չնչին են:

Սորհրդային Հայաստանում 28 թվին քութեշով հիվանդների ընդհանուր թիվը յեղել ե 4239. ասել է՝ 10.000 հոգուն ընկել ե 46 հիվանդ: Մահացութիւն միջին տոկոսը յեղել ե 15, վորը պիտի համարել բարձր:

Քութեշ հիվանդութիւնը սկսվում ե հանկարծակի, այն ժամանակ, յերբ յերեխան իրեն զգում ե առողջ ու առույգ: Գլխացավ ե ունենում, մարմինն սկսում ե կտրատվել, տաքութիւն աստիճանը բարձրանում ե, կերածը փսխում ե ե կոկորդն ել ցավում, այնպես վոր առաջին որերը յերեխան հրաժարվում ե կերակրից: Վզի գեղձերը մեծանում են ե շոշափելիս ել խիստ ցավ պատճառում:

Տաքութիւնն ու կոկորդի ցավը համարյա

Հիվանդության
բնույթը

նր սկսվում ե հանկարծակի, այն ժամանակ, յերբ յերեխան իրեն զգում ե առողջ ու առույգ: Գլխացավ ե ունենում, մարմինն սկսում ե կտրատվել, տաքութիւն աստիճանը բարձրանում ե, կերածը փսխում ե ե կոկորդն ել ցավում, այնպես վոր առաջին որերը յերեխան հրաժարվում ե կերակրից: Վզի գեղձերը մեծանում են ե շոշափելիս ել խիստ ցավ պատճառում:

բոլոր քութեշով հիվանդների մոտ մնայուն նշաններ են:

Շատ չանցած՝ յերեխայի մարմնի վրա այս նշաններին հետևում ե ցանը:

Սովորաբար ցանը կարմրավուն կամ կասկարմիր ե լինում, ծանր դեպքերում՝ մանիշակագուն կամ թե կապտավուն:

Բնորոշ ե հիվանդի դեմքի ցանը: Նա բլունում ե հիվանդ յերեխայի ճակատը, այտերն ու ականջները, իսկ շրթունքներն ու կզակը մնում են ազատ. ստացվում ե մի տեսակ յեռանկունի, սփրթնած:

Մի շարթվա մեջ ցանը սկսում ե գունատվել ու իսպառ վերանալ. տաքութիւնն ընկնում ե, հիվանդն սկսում ե իրեն լավ զգալ, չնայած նրա գունատութիւնն ու ընդհանուր թուլութիւնն: Միջանի որից վերջին նշաններն ել անցնում են, ե շրջապատը համարում ե վտանգն անցած: Բայց դա հաճախ խաբուսիկ ե լինում:

Քիչ չեն դեպքերը, յերբ հարգութիւնները նոր բարգոլութիւններ են առաջանում, վորոնք լրջորեն վտանգում են յերեխայի կարևոր գործարանները՝ յերիկամունքները, ականջները, թոքերը, հոգակապերը . . . Նման յերեւութները կարող են կրկնվել միջանի անգամ: Դրա համար ել

հարգութիւնները

պետք է խիստ զգուշ լինել և թեթևացող նշանները չպիտի համարել վերջնական առողջութեան ազդակներ, քանի վոր քութեշի բարդութիւններէց յերեխաները կարող են ընդմիշտ թույլ ու հիվանդ մնալ, իսկ վորոշ դեպքերում նույնիսկ աշխատանքի անընդունակ ու կիսանդամալուծ, ինչպես, որինակ՝ լերիկամունքների բորբոքման ժամանակ շատ անգամ հիվանդի մարմնի վորոշ մասերում շրգոլութիւն է առաջանում, վորը դժվար բուժելի հիվանդութիւն է: Կամ թե հիվանդի ականջներից թարախէ հոսումներ են տեղի ունենում և յերեխայի խլութեան պատճառ դառնում:

Քութեշի վարակի գլխա-Քութեշի տարածումը
 վոր բներից մեկն էլ հանդիսանում է հիվանդ յերեխայի կոկորդը: Յերբ նա հազում է, վարակի բացիւնները ցրվում են ողի մեջ և տարածվում ամեն կողմ: Ամենից առաջ մանրեները նստում են հիվանդի անկողնին ու նրան շրջապատող իրերի վրա, իսկ նըրանցից էլ փոխանցվում են ու տարածվում ավելի հեռուները: Տարածողներն ըստ մեծի մասին լինում են հիվանդների հետ շփման մեջ յեղողները, այն է՝ հիվանդապահները, այցելուները, բայց ամենից շատ հիվանդի յեղբայրներն ու քույրերը:

Վարակի տարածումը մեծ Գաղթեթի օրջան
 և հատկապես հիվանդութեան գաղտնի շրջանում, յերբ անհայտ է հիվանդութեան ինչ լինելը: Այդ շրջանում յերեխաներն ազատ դպրոց են հաճախում, շրջում են փողոցներում, տրամվայ կամ ավտոբուս են նստում կամ այցելում են ծանոթ տներ: Վերջին դեպքերում նրանք կարող են քութեշի վարակի լավագույն տարածողներ հանդիսանալ: Այնպես վոր համաճարակների ժամանակ, յերբ յերեխաներից մեկնումեկի կոկորդը ցավում է, և տաքութեան աստիճանն էլ բարձր է, պիտի մտածել քութեշի մասին և անմիջապես բժշկի դիմել: մանավանդ յերբ հիվանդն էլ կերածը յետ է բերում: Շատ հաճախ է պատահել, վոր հիվանդն իրեն լավ է զգում, և քութեշի սկզբնական նշաններն էլ բացակայում են. նման դեպքերում ազատ այցելում են հիվանդին և նրա հետ միատեղ ուտում ու խմում են. այսպիսով և՛ այցելուներն իրենք են վարակվում, և՛ վարակի թույնը տանում են հեռուները:

Նախազգուշացումներ
 Հիվանդութեան տարածման իսկական աղբյուրն, ինչպես ասացինք, հանդիսանում է ամենից առաջ ինքը հիվանդը, վորին հարկավոր է անմիջապես մեկուսացնել: Ամե-

նից լավը հիվանդանոց ուղարկելն է: Բայց դրանով ամեն բան չի վերջանում: Բոլոր իրերը, վորոնք գործածութեան կամ շփման մեջ են յեղել հիվանդի հետ՝ սպիտակեղեն, հագուստ, խաղալիքներ, գրքեր, սենյակ, ուր պառկած է յեղել հիվանդը, կարող են վարակի անմիջական աղբյուր հանդիսանալ, հետևապես խնամքով պիտի ախտահանել. լավագույն ու վստահելի միջոցը վարակի իրերը բարձր աստիճանի տաքութեան յենթարկելն է, լինի դա ողի, թե գուրդու միջոցով: Արժեք չներկայացնող իրերը՝ մաշված լաթերը, տետրերը, գրքերը պիտի այրել. սպիտակեղենը և ամանեղենը տեղական յեռման ջրի մեջ պահել, իսկ վերարկուները, վերմակները և հագուստները խնամքով դեզինֆեկցիայի յենթարկել:

Սենյակների ախտահանութիւնը պիտի կատարվի ուշադիր. հատակը, պատուհանները նախ սապոնով, ապա լիզոլի սուլբամայի կամ կարբոլկայի խառնուրդով լվանալ. այդպիսով ըութեշի մանրէները վոչնչանում, անվտանգ են դառնում: Լավ կլինի բնակարաններն ախտահանել Ֆորմալինի գոլորշիով, վորը թափանցում է սենյակի բոլոր ճեղքերը. բայց դա կատարվելու յե բժշկի ձեռքով:

Հատուկ ուշադրութիւն պիտի դարձնել

մանկատների, մսուրների ու դպրոցների վրա, ուր համաճարակը մեծ չափեր կարող է ընդունել:

Համաճարակների ժամանակ առանձնապես վտանգ են ներկայացնում կաթնավաճառները, հացթուխները և լվացարարները, վորոնց աներում քութեշով հիվանդներ են յեղել:

Նման դեպքերում պիտի ժամանակավորապես արգելել նրանց շփում պահպանել ազգաբնակչութեան հետ: Այդ հսկողութիւնն իրենց վրա յեն վերցնելու գիտակից քաղաքացիները: Թաղութների ժամանակ չպիտի ուղեկցել մեռելներին. վարակի տեսակետից նրանք ևս վտանգ են ներկայացնում:

Քութեշով հիվանդների

Առաջին խնամք

առաջին խնամքը կայանում է նրանում, վոր նրանց մեկուսացնում են ընտանիքի մյուս անդամներից: Հատկապես սնից պիտի հեռացնել փոքրահասակ յերեխաներին: Լավ կլինի նրանց պահ տալ այնպիսի ընտանիքների, ուր յերեխաներ չկան, կամ թե յեղածները մեծեր են:

Այն բոլոր յերեխաներին, վորոնք այսպես թե այնպես շփում են ունեցել ըութեշով հիվանդների հետ, պիտի յերկու շաբաթ հսկողութեան տակ առնել և թույլ չտալ դպրոց հաճա-

խել կամ առողջ յերեխաների հետ խաղալ: Յեթե այդ ժամանակամիջոցում յերեխան չհիվանդացավ, վտանգն անցած պիտի համարել, և նա կարող է դպրոց հաճախել:

Քութեշով հիվանդին պիտի տեղավորել մաքուր ու լուսավոր սենյակում, վորտեղից պիտի հեռացնել ավելորդ իրերը: Սենյակի սաքությունը պիտի լինի Յելսիուսի 16—18 աստիճան: Սենյակի ողն ամեն որ պիտի նստողեր: Հիվանդի անկողինն ու սպիտակեղենը պիտի մաքուր պահել և հաճախ փոխել: Լավ կլինի հիվանդի դռանն ու բարձր խոտով կամ դարմանով լցնել, վորպեսզի հետագայում, յերբ հիվանդն առողջանա, հնարավոր լինի աչքել:

Բարձր տաքության ժամանակ հիվանդի գլխին դնել սառուցով լի պարկ կամ ձակատին՝ սառը քացախաջրի կոմպրեսսներ: Առհասարակ պիտի խուսափել ջերմություն իջեցնող զանազան դեղերից: Հարկավոր է հիվանդ յերեխայի բերանն ու կոկորդը հաճախ փողոզել տալ պարզ աղաջրով:

Վարակից պաշտպանվելու լավագույն միջոցն է՝ բնավ չմտնել քութեշով հիվանդի տուն կամ վերցնել այնտեղից իրեր: Հիվանդ ունեցողներից իրեր կարելի չէ վերցնել

միայն նրանց ախտահանելուց հետո: Տանը հիվանդ ունենալու դեպքում տան մյուս անդամները, մեծ թե յերեխա, յեթե նրանք նախապես մեկուսացած չեն, չպիտի դպրոց հաճախեն կամ առողջ յերեխաների հետ շփում ունենան: Համաճարակի ժամանակ հաճախ պիտի լվանալ ձեռքերը, մանավանդ ուտելուց առաջ, լավ կլինի դպրոցից կամ դրսից տուն վերադարձին փոխել շորերը, վորովհետև փոշու միջոցով կարելի չէր քութեշի մանրեն տուն բերել: Առհասարակ պիտի զգուշանալ և թույլ չալ յերեխաներին փողոցներում կամ հրապարակներում, բաց ամաններից իրիս, խմորեղեն, խնձոր, սեմիչկա և այլ ուտելիքներ գնեն, վորոնց վրա հեշտությամբ կարող է փոշի նստած լինել: Պիտի խուսափել դպրոցում կամ հրապարակական գրաստավայրերում ընդհանուր բաժակով ջուր խմելուց: Առհասարակ չպիտի ուտել միենույն ամանից կամ ուրիշի դալով: Չպիտի համբուրել, ալլապես հեշտությամբ կարելի չէ վարակվել:

Յեթե ինքը հիվանդ էս, զգուշացիր, վոր ուրիշին չվարակես: Մի անգամ քութեշով հիվանդանալուց հետո հազվադեպ է յերկրորդ անգամ հիվանդանալը: Բայց միշտ պիտի հիշել, վոր յեթե ինքը չես հիվանդանալ, կարող էս ուրիշին վարակել: Դրա համար էլ ազատ յելու

մուտ չպիտի ունենաս հիվանդ ընկերների տները:

Քեզ պաշտպանելով վարակից՝ պաշտպանած կլինես ուրիշներին: Յերբ մեկը բոլոր գոուշությունները գործադրում է, վոր չվարակվի, նա միաժամանակ պաշտպանած է լինում իր ընկերներին: Այս դիտակցությունը հարկավոր է մասսայականացնել և բոլորի սեփականություն դարձնել, քանի վոր դա լավագույն ձևն է քութեշի դեմ պայքարելու:

Հիվանդապահ մայրերն ու քույրերը պիտի հակեն իրենց մաքրության վրա. պիտի հաճախ լվանան իրենց ձեռքերը, դրսի հետ հարաբերություն չպահեն, չհամբուրեն հիվանդ յերեխաներին: Վերջիններիս թուքը, խորխը, մեզը և այլ արտադրությունները խնամքով ախտահանեն ու անվտանգ դարձնեն:

Հիվանդն անկողինը կարող է թողնել յերեք-չորս շաբաթից վոչ շուտ: յերբ շերմության պատիճանը նորմալ է, յերիկամուռները վնասված չեն, մարմնի թեփոտելն էլ անցել է: Առաջին շաբաթներին հիվանդին դյուրամարս կերակուրներ պիտի տալ. պիտի խուսափել մսից, ծարավը կտարելու յե յեռացրած շրտի թեյով, լիմոնաջրով:

Լավագույնն է՝ դիմել բժշկին և հիվանդու-


թյան ընթացքում նրա խորհուրդներով առաջնորդվել:

Հիվանդացոց Գութեշով հիվանդներին վորքան կարելի յե շուտ պիտի փոխադրել հիվանդանոց, վորպեսզի շուտ էլ բուժագնություն ստանան: Այլապես դժվար կլինի ժամանակին թեթևացնել հիվանդությունը և կանխել գալիք բարդությունները: Յեվ քանի վոր քութեշը ծանր հիվանդությունների շարքին է պատկանում, հետևապես հիվանդին հարկավոր ուշադրություն ու խնամք ավելի դյուրին է հիվանդանոցում ցույց տալ: Յերբեմն շտապ միջամտություն է պետք միջին ականջի բորբոքման ժամանակ կամ յերիկամուռների բարդությունների դեպքում, հարկավոր են տաք վաննաներ, իսկ սրտի հանկարծակի թուլության ժամանակ սրսկուճների կամ պահանջված դեղորայքի գործածություն, սրանք բոլորն էլ կարավոր են միմիայն հիվանդանոցում: Վերջապես վորքան շուտ հիվանդը փոխադրվի հիվանդանոց, այնքան պակաս կլինի շրջապատի վարակման հավանականությունը:

Ընդունելով հիվանդանոցների մեծ նշանակությունը վարակիչ հիվանդությունների դեմ տանելիք պայքարում, պիտի բոլոր հնարավոր միջոցներին դիմել, վորպեսզի նրանք կանգնած

89-155-68

И И О Т Е Р А
С И Т У Т А
В О О Б Е Д Е Н И Я
С С С Р



լինեն իրենց կոչման բարձրութեան վրա: Այլապես հիվանդանոցները չեն վայելի այն մեծ հարգանքն ու վստահութիւնը, վորին իրող արժանի յեն:

Բուժեջի բաժանմունքն այնպես պիտի կազմակերպել, վոր նա իսկապես ոգուտ տա և վոչ թե վարակի տարածման բուն հանդիսանա: Իրա համար ել ունենալու յե բոլոր հարմարութիւնները վարակը վոչնչացնելու համար. նմանապես ներքին կարգ ու կանոնն այնպես և դրվելու, վոր վարակը հիվանդանոցից վոչ մի ձեռով հնարավոր չլինի դուրս տանել: Իսկ վերջին հանգամանքը կախված և վարակիչ հիվանդանոցներում ծառայող աշխատակիցներին դիտակցութիւնից:

Աշխատանքները վերջացնելուց հետո բոլոր բուժաշխատակիցները, վորոնք պիտի հիվանդանոցը թողնեն, հնարավորութիւնն են ունենալու սպարոնով լավ վազվելու և հազուադէպն ել վոխելու: Խիստ հսկողութիւնն և նշանակվելու հիվանդատեսներին վրա. լավ կլինի քուժեջի բաժանմունքն այնպես կազմակերպել, վոր դրսից կարելի լինի հիվանդներին տեսնել. իսկ յեթե դա հնարավոր չե, այն ժամանակ խստիվ պիտի սահմանափակել այցելուների թիվն ու որերը և այնպես անել, վոր նրանք վարակի տարածման աղբյուր չհանդիսանան:

Համաճարակի բնույթն ու աշխուժութիւնը շատ անգամ կախված են այցելուների թույլ ու անդգուշ կազմակերպութիւնից: Փիտի մեծ ուշադրութիւնն դարձնել նաև հիվանդների հիվանդանոցից դուրս գրելու վրա: Անժամանակ հեռացումները կարող են նույնպես մեծ վտանգ ներկայացնել վարակի տարածման համար:

Հիվանդանոցն ունենալու յե կահավորութիւնն և հարկավոր քանակով ել ծառայողների կազմ: Այլապես կտուժեն հիվանդները, և հիվանդանոցն ել նպատակին չի ծառայիլ:

1928 թվի մայիսին Մոսկվայում տեղի ունեցած համաժողովներին մամիութենական մանրեաբանները, համաճարակագիտական և սանիտարական բժիշկների համագումարը հակաքութեջային վակցինայի մասին հանել և հետևյալ վորոշումը. «Հակաքութեջային վակցինացիան համարել զիտականորեն հիմնավորված պրոֆիլակտիկ միջոց և հանձնարարել նրա լայն գործադրութիւնը»:

Վորպես կանխիչ միջոց մեզանում կատարվել և այժմ ել շարունակվում են հակաքութեջային վակցինայի մասսայական սրսկումներ, վորոնք սովել են միանգամայն դրական արդիւնքներ:

1928—29 թվերին խորհրդային Հայաստանում ներարկված են՝ 1-ական անգամ 133,500 յերեխա, 3-ական՝ 120.300 և 3-ական՝ 82.000: Սրահումները կատարվել են մինչև 14 տարեկան հասակ ունեցող յերեխաների վրա, վորոնց մեջ գերակշռել են 1—3 տարեկանները:

1928 թվի ղեկառնմանը, յերբ մեղանում սպասվում էր քութեջ համաճարակի ուժեղ թափ, սրահումներից հետո սկսում է աստիճանաբար իջնել: 1928 թվի ոգոստոսին քութեջով հիվանդաների թիվը յեղել է 251, սեպտեմբերին՝ 437, հոկտեմբերին՝ 876, նոյեմբերին՝ 1142, ղեկառնմանը բարձրանալու փոխարեն իջնում է 901-ի, 1929 թվի հունվարին՝ 460-ի, փետրվարին՝ 262-ի, մարտին՝ 240-ի, ապրիլին՝ 178-ի, մայիսին՝ 112-ի և այլն:

Բացի համաճարակի թուլացումից, ստուգված փաստ է, վոր հսկախութեային վակցինալով սրակված յերեխաները թերեկ են անցկացնում նայել իրենց հիվանդությունը, և շատ չնչին են մահացությունները: 100 սրակվածներից միայն մեկն է հիվանդանում փութեով:

Ինչձվ բացատրել վակցինացիայի նման բարեբար ազգեցությունը:

Մաղկի, ղիֆտերիտի և այլ վարակիչ հիվանդությունների փորձերից ղիտենք, վոր միև-

նույն միկրոբի թույնը մացնելով յերեխաների որգանիզմի մեջ, լինի նա սպանված ղրության մեջ, թե կենդանի, սակայն վերջինս թույլ չափով, մարմին տալիս է ղիմացկունություն. ղրանով ստիպում ենք մանկան որգանիզմին պատասել հակաթույն և այդ ձևով ղիմաղբել վարակիչ հիվանդությունների բացթայիչ ու մահաբեր ազգեցություններին:

Նման ղեպքերում մենք ասում ենք, թե մեր որգանիզմը ձեռք է բերում իմունիթես, այսինքն այլևս հիվանդության վարակ չի ընդունում:

Իմունիթես են ունենում նաև բոլոր հիվանդացածները:

Մեր որգանիզմի վարակ չըդունելու տեղությունը տարբեր է, նայած հիվանդությունների. նա տևում է վեց ամսից մինչև միբանի տարի:

Յերբ այս կամ այն վարակիչ հիվանդությունների մանրեն ձիշտ հայանի չե, սակայն հայտնի յե, թե մարմին վոր մասերում և որգաններում է վարակը ղարգանում, այս կամ այն ձևով, վերցնում են կենդանի թույնը և նրանից պատրաստում են սրակման նյութ: Որինակ՝ կատաղության ղեմ սրակվելիք նյութը պատրաստում են կատաղած շան ուղեղից: Գութեջինը վերցնում են հիվանդի արյունը, խառ-

նում են հատուկ բուլլոնի հետ, ուր բազմանում են քութեշի միկրոթներ, ապա ապանում են և այդ ձևով սրսկում յերեխաներին:

Հակափութեայի վակցինան իր ուժը պահպանում է մոտ մեկ ամիս յետոյ դա այն դեպքում, յերբ սրսկումը կատարվում է յերեք ամիս, ամեն 4—5 օրը մեկ:

Հակաքութեշային պատվաստը միանգամայն անվտանգ է. շատ քիչ դեպքերում սրսկած տեղը ցալում է ու կարմրում. յերեխաներից վճռանք էլ մեկ-յերկու օր անտրամադիր են դառնում, և ապա ամեն ինչ անցնում է:

Հակաքութեշային վակցինացիան յերբեք քութեշ հիվանդություն չի առաջացնում: Իսկ յեթե պատահում է, վոր սրսկումներից հետո յերեխայի մարմնի վրա յերևում է ցան, կամ կոկորդը թեթև ցալում է, առանձին անհանգրստության կարիք չկա. դրանք վարակիչ չեն:

Միանգամայն անտեղի պիտի համարել այն վտանգը, վոր շատերը վերագրում են համաճարակների ժամանակ արված վակցինացիային: Հակաքութեշային վակցինան գաղտնի շրջան ապրող յերեխային վոչ մի վնաս չի պատճառում:

Հակաքութեշային վակցինացիան պարտադիր է լինելու 1—10 տարեկան յերեխաների համար:

Պայթաբ ընդհանուր ուժերով:

Յերբ քութեշի համաճարակի վտանգ կա, նախապես պատրաստվելու լենք

ուժեղ պայքարի, Մենք պիտի վոչնչացնենք այն բոլոր վնասատուները: Վորոնք կարող են վարակման բուն հանգիստնալ: Քութեշով հիվանդ շրջաններում պիտի խոտիվ արգելել հիվանդ յերեխաների սնեք հաճախելը. չպիտի թույլ տալ հիվանդներից գրքեր և այլ իրեր վերցնել:

Լավագույնն է, վոր մեր աշխատավորությունն ու մատաղ սերունդն ինքն ըմբռնի նախազուշական միջոցների կարևորությունը և խիստ հսկողություն նշանակի տանը, դպրոցում և դուրսը: Անմիջական աշխատանքի նման ձևը հնարավորություն կունենա դուրսությամբ կանխել հիվանդությունները և թույլ չտալ համաճարակների լայն տարածումը:

Քութեշը, ինչպես և մյուս վարակիչ հիվանդությունները, դարգանում են անմաքուր, խոնավ ու խավար բնակարաններում, ուր չեն հետևում մարմնի, հագուստների, սպիտակեղենի ու ամանների մաքրության, ուր չկա կանոնավոր ոգափոխություն, և չեն թափանցում արևի ճառագայթները:

Կեղտը, անմաքուր ջուրը, թարմ սղի բացակայությունը, անբավարար ու վատ սնունդը-

սրանք են համաճարակների տարածման գլխավոր պայմանները:

Քուլթեշի դեմ կարելի չե կովել միմիայն զինված առողջապահական գիտելիքներով: Իսկ դրա համար պիտի աշխատեն վոչ միայն մեր սան-բուժ. հիմնարկներն, այլ վողջ ազգաբնակչութունը, հատկապես մեր նոր կյանքի դարձրնողները՝ լերիտասարդ սերունդը և աշխատավորութիւնը:

Առանց մասսաների լայն աջակցության, կարելի չե հաստատ ասել, ամեն գործ մատնեված պիտի համարել անհաջողության:

ԼՈՋՈՒՆԳՆԵՐ

1. Յեթե ինքդ հիվանդ ես քուլթեշով, զգուշացիր, վոր չվարակես ուրիշին:
2. Քեզ պաշտպանելով վարակից, պաշտպանած կլինես նաև ուրիշներին:
3. Քուլթեշի ժամանակ դպրոցներում կամ հրապարակական վայրերում ընդհանուր բաժակով ջուր մի խմիլ:
4. Չպիտի ուտել միկնուշն ամանից կամ միկնուշն գդալով:
5. Չպիտի համբուրել:
6. Խուսափիր փողոցում բաց ամաններից իրիս, խմորեղեն, խնձոր և այլ ուտելիքներ գնել և ուտելուց, նրանց վրա նստած ե լինում փոշի:
7. Դպրոցից կամ դրսից առևն վերադարձին՝ փոխիր հագուստդ, վորովհետև փոշու միջոցով կարելի չե քուլթեշի ժանրենները առևն բերել:
8. Մի հաճախիր քուլթեշով հիվանդների բնակարան:
9. Առանց ախտահանվելու դպրոց մի հաճախիլ, լերբ յեղբայրդ կամ քույրդ հիվանդ ե քուլթեշով:
10. Քուլթեշով հիվանդ ընկերոջից գիրք կամ տետրակ մի վերցնիլ. կարող ես վարակվիլ:

11. Քութեշով հիվանդ ունեցող հացթու-
խից կամ կաթնավաճառից մի գնիր հաց և կաթ:


12. Խնամքով ախտահանիր բնակարանդ, յերբ
ունեցել ես քութեշով հիվանդ:


13. Քութեշը զարգանում է անմաքուր բնա-
կարանում, ուր չեն հետևում սենյակի, մարմնի,
հագուստների, սպիտակեղենի և ամանների մաք-
րության:

14. Պատվաստվիր հակաքութեշային վակ-
ցինայով, յերբ համաճարակի վտանգ կա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Միկրոբներ	3
2. Քութեշը վարակիչ հիվանդություն է	6
3. ՅՖրբ և տարածվում քութեշը	7
4. Մահացութուններ	7
5. Հիվանդության նշանները	8
6. Բարդութունները	9
7. Քութեշի տարածումը	10
8. Գաղտնի շրջան	11
9. Նախազգուշական միջոցներ	11
10. Առաջին խնամք	13
11. Ի՞նչպես պիտի պաշտպանվել	14
12. Հիվանդանոց	17
13. Պատվաստի անհրաժեշտութունը	19
14. Պալքար ընդհանուր ուժերով	23
15. Լոգունգներ	25





ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ Ազգային գրադարան

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ Ազգային գրադարան

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ Ազգային գրադարան

« Ազգային գրադարան »



NL0279973

7081

Д-р Казарян
СКАРЛАТИНА

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Handwritten signature



ԳԻՆԸ 5 4.